մի ուրիշ քուրդ սորա կը խափէ թէ իւր աղջիկն իրեն պիտի տայ, ուլինքը ձեռքէն կառնէ, աղջիկն ալ չտար։ Հովիւը կը տեսնէ քրդի հարստութիւնը, որ ուլինքի պատճառով էր, կը խելագարի։

Կանի-սպին հայերով շէն տեսնողներ եղած են։ Սորա $^1/_4$ ժամ արևելեան հիւսիս ալ կայ Ղարա-հիւսէնի աւերակն։

ԽՈՇԵԱՆ

Մօլլա-սիւլէյման գիւղի հարաւը $^1/_2$—$^3/_4$ և մի ժամ հեռաւորութեան վերայ կան երեք գիւղօրայք, որք մի գծի վերայ իրարու յարևելս կընկնին, որոց քաւշաններն դաշտային վայր գտնուած են և սորա են Խոշեան, Մսուրի և Շամեան, որք Ջետկան և Խոփուզ Ջրոց միջավայրն կընկնին և Մօլլա-սիւլէյմանայ շուրջն։

Ջետկան գիւղի 1 $^1/_4$ ժամ արևելեան հարաւն արքունական խճուղւոյն աջ կողմը մի հայ և քրդաբնակ գիւղ է Խոշեան՝ 25 տնէ բաղկացեալ։

Գիւղէս $^1/_2$ ժամ ի հիւսիս Մօլլա-սիւլէյման, 1 $^1/_2$ ժամ ի հարաւ Խաստուր հայաբնակ գիւղերն են և $^1/_4$ ժամ յարևելս՝ Մսուրցիք, գիրքն գեղեցիք, դաշտիս ամեն կողմն տեսարան ունի։

Գիւղիս հիւսիսէն կանցնի Կռաւի Ջուր մի, որ Սուկաւէտի կողերէն կիջնայ, Մօլլա-սիւլէյմանայ արևմտեան եղրէն անցնելով կը միանայ Խոշեանայ Ջրաղացքի Ջրին, որ Ջետկանայ Ջրէն բաժանուած է, կը հոսի ի հարաւ արևելս։

Ջետկանայ գետակն ալ գիւղիս հարաւէն կանցնի, ի հարաւ արևելս կը հոսի։